

# ՄՇԱԿ

Տարեկան դիմը 10 բուրդի, կես տարվանը 6 բուրդի.  
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.

Սօֆիա Մելիքեան, Կարապետ և Բեգլար Կոնիեան վարդապետները և Մարիամ Կոնիեան ու Յովհաննէս Աւետիքեան Շաբաթները, ցաւօք սրտի յայտնելով առաջինի ամուսնոյ, երկրորդներին՝ հօր և վերջինի աներոջ

ԿՕՐԻՒ ՅՈՎՀԱՆՆԵՍԱՆՆԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ

մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին շորհ ընդ յուզարկաւորութեան հանդիսին, որը լինելու է ամիս 9-ին, կիրակի, առաւօտեան 10 ժամին, Բեգլար վարդապետանցի տանից, վերջինսօվակայա և Բոլշայա Կրիլայա փողոցների անկիւնում, դէպի Նորաշէն եկեղեցին:

Ամբիճքը լինելու է ամիս 8-ին, շաբաթ երեկոյեան 6 ժամին: 1—1

զատամիտների, ազատ մտածողների, առաջադիմականների համակրութիւնը, այն առաջադիմականների, որոնք մինչև օրս իրան, Բիւսանդի երրուեալ թշնամիներ են եղել միշտ:

Բիւսանդի շատ լաւ գիտէ, որ առաջադիմականները, որոնք, ինչպէս ասեցինք, իրան, Բիւսանդի անհաշտ թշնամիներ են եղել միշտ, երբեք են Գերմանիայում իրաւորութեամբ տեսնել անդիմական կամ Ֆրանսիական սահմանադրութեան պէս մի սահմանադրութիւն իր հօր պարլամենտով, միւստորութեան պատասխանատուութեամբ, որի անբաններն ընտրվում են ազգային ժողովի մեծ ամասնութեան շրջանից, վերջապէս մի սահմանադրական պետութիւն, որի պետը չի սահմանադրւում է, բայց չէ կառավարում: Եւ ահա նայում իր արտասանած ճառի մէջ նախկին գերմանական կանցլերը հանդէս է գալիս իր համար մի բարոյութիւն նոր դերում: Նա ազգային մի ժողովի, պարլամենտի, ազգի ներկայացուցիչների ժողովի իրաւունքների պաշտպան է հանդիսանում ընդդէմ միապետական իշխանութեան անսահման ձգտումներին: Իր արտասանած վերջին երկու ճառերով իշխան Բիւսանդի ապացուցեց, որ իր ակամայ արձակուրդի միջոցին՝ նրան աջողվեց շատ բան մտածել և շատ բան ասելու: Նայում իր արտասանած ատենաբանութեան մէջ Բիւսանդի յորդորում է գերմանական քաղաքական կուսակցութիւնները միաւորվել միապետական իշխանութեան անսահման ձգտումներին դէմ համբարխութեամբ գործելու համար:

Ոչ թէ միայն ինքն Բիւսանդի, բայց և դեռ ոչ որ Գերմանիայում երբէք չէ խօսեցել այդքան պարզ, այդքան որոշ կերպով ազգի և միապետի իրաւունքների մասին, երբէք չէ արտայայտել այդքան դրական կերպով այն համոզմունքը, որ պէտք է իշխանութեան հաւասար բաժիններ յատկացնել միապետի կամքին և ազգի կամքին:

Բիւսանդի համոզմունքների մէջ կատարված այդ տեսակ արմատական յեղափոխութիւնը մեզ գուշակել է տալիս թէ այդ մարդուն դեռ ևս վիճակված է մեծ դեր խաղալ իր հայրենիքի քաղաքական ասպարէզում: Իր հայրենիքի մասին թէ գուցէ մտածել ապագայում մենք ականատես պիտի լինենք Գերմանիայում կատարվելի նշանաւոր քաղաքական անջըրի: Գերմանիան իր արտաքին, քաղաքական միութիւնին իրագործելուց յետոյ, կար-

ծես թէ ոտք պիտի կոխէ մի բարոյութիւն նոր ասպարէզի վրա՝ պիտի ձգտէ իր ներքին, քաղաքացիական ազատութեան ձեռք բերելուն:

Եւ դարձեալ իշխան Բիւսանդի է յանձն առնում առաջնորդել իր հայրենակիցներին այդ իրանց համար նոր և անսովոր ասպարէզի վրա, մարդկային ազատութեան թեանը ձգտելու ասպարէզի վրա:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԷՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Բազուի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 3-ին Բազուում հիւանդացի են 3, մեռել են 3, առողջացել է 1, մնացել են 15 հոգի: Չիւանդուական հիւանդանոցում կային 25, նահանգում հիւանդացի են 253, մեռել են 219, առողջացել են 33, մնացել են 130 հոգի:

Ելիսուսուպոյի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 3-ին Ելիսուսուպոյ քաղաքում հիւանդներ չը կային. նահանգում հիւանդացի են 33, առողջացել են 45, մեռել են 31, մնացել են 166 հոգի:

Գաղտանի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 3-ին Գաղտանում խօլէրայով հիւանդների մէջ փոփոխութիւններ չեն եղել, շրջանում հիւանդացի են 553, մեռել են 205, առողջացել են 208, մնացել են հիւանդներ՝ Գորայում 15, շրջանում 1864 հոգի:

Քուսթայի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 3-ին Քուսթայում հիւանդացի են 2, մեռել է 1, մնացել են 10. նահանգում հիւանդացի է 1, առողջացել են 2, մնացել են 25 հոգի:

Երևանի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 2-ին Երևանում հիւանդացի են 58, մեռել են 44, առողջացել են 2, մնացել են 132. նահանգում հիւանդացի են 263, մեռել են 136, առողջացել են 2, մնացել են 604 հոգի:

Ղարսի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 2-ին, 3-ին և 4-ին Ղարսում հիւանդացի են 3, մեռել են 2, մնացել է 1. Ծորագետի գաւառամասում հիւանդացի են 118, առողջացել են 50, մեռել են 62, մնացել են 128 հոգի:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իշխան Բիւսանդի նոր կերպարանքը.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ խօսեցան մասին. Մի նկատողութիւն. խօսեան Զանգեզուրի գաւառում. Նամակ Կարսից. Նամակ Մեղրիից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժողովրդի համար նախապահպանողական միջոցներ խօսեցան դէմ:

## ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿԻ ՆՈՐ ԿԵՐԱՐԱՆՔԸ

Գեռ անցեալ տարիներում, երբ առիթ էր ունեցել իշխան Բիւսանդի գործունէութեան մասին խօսելու, մենք շատ անգամ ասել ենք, որ այդ պետական մարդու ամբողջ կենսագրութիւնը ամենամայրայեղ հակառակութիւններից հրեւոյած մի կենսագրութիւն է: Եւ ծերունի պետական գործիչը նորից հաստատեց իր մասին ունեցած այդ կարծիքի ճշմարտութիւնը. Գերմանիայում իր նոր արած ձանապարհորդութեան և իր արտասանած ճառերի ժամանակ Այս օրերս Կիսինգէն և Նիս քաղաքներում իր արտասանած ատենաբանութիւններով իշխան Բիւսանդի այլ ևս ոչ մի կասկած չէ լծողում, որ գիտաւորութիւն ունի, հէնց որ պատահ առիթ կը ներկայանայ, բացարձակապէս որպէս գիտաւորական կուսակցութեան պարագլուխ հանդիսանալու: Նոյն Բիւսանդի, որը մի ժամանակ ամենամահաշտ թշնամի էր սահմանադրական կուսակցութեան ձեռք, որը յանդիմանաբար ծաղրում էր պարլամենտը որը բռնաւոր կերպով ծնւում էր ազատ մարտը.— այժմ վիճելով կայսրի հեղինակութեանը վնասելու համար սկսել է անորոք արտասանել մեզ կայսրի ձգտումների դէմ իր իշխանութիւնը «ստուճու կամքից»

բղիւսած իշխանութիւն համարել տալու: Իր վերջին ատենաբանութիւններից միտում իշխան Բիւսանդի շատ ճարպիկ կերպով յիշեցրեց իր նախկին աշակերտին, այժմեան գերմանական կայսրին, որ Գերմանիայում բացի կայսրից կան դաշնակցական խորհուրդը և ընկեստագրը, որոնք եթէ ոչ աւելի, քան նոյնպիսի որչափ և կենցկայսրը, իրաւունք ունեն ղեկավարել Գերմանիայի քաղաքական վիճակը, մինչդեռ գերմանական կայսրը, գերմանական սահմանադրութեան ոգուն համեմատ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ զօրքերի բարձրագոյն հրամանատար, այն էլ գլխաւորապէս պատերազմի ժամանակ:

Կար ժամանակ, երբ Բիւսանդի իշխանը յանդիմանաբար նախատում էր ընկեստագրը, որ այդ ազգային ժողովը չէր կամենում զօրքի համար առաջարկած բնութեան աւելացնել, ասելով թէ «գերմանական միութեան ստեղծողը զօրքն է եղել և ոչ թէ ընկեստագրը»: Իսկ այժմ նոյն Բիւսանդի բացարձակապէս յայտնում է, որ խաղաղութեան ժամանակ ամբողջ Գերմանիան կառավարում են դաշնակցական խորհուրդը, որպէս օրգան գերմանական բոլոր միապետների և ընկեստագրը, որպէս համազումար ժողով գերմանական ազգի ընտրված ներկայացուցիչների: Նախ ձանապարհորդելով Կրեդիտը, վիճինա և Միլիտարը, այսինքն Սակսոնիա, Աւստրիա և Բաւարիա, իշխան Բիւսանդի իր ատենաբանութիւններով աշխատեց դրանք գերմանական «պարտիկուլարիստները», այսինքն ինքնավարական գաղափարի կուսակցիցների համակրութիւնը, որոնք առհասարակ թըրք նամաբար են վերաբերվում Պրուսիայի ծնող և ամեն բան կրանող գերմանութեան, ապա Կիսինգէն և Նիս քաղաքներում իր արտասանած ճառերով նա աշխատում է գրաւել և բուն սահմանադրականների, ա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԽՕԼԷՐԱՅԻՆ ՀԱՄԱՋԱՐԱԿԱՆ ԴԵՄ

Ինչ է մտած, մեզ անկէ այսպիսի տխուր դրութեան մէջ: Այժմ պէտք է թէ ժողովուրդը, թէ կառավարութիւնը և թէ բոլորիցս կրթնապետները լարեն իրանց ուժերը, որ ազատվեն այդ խորափակի տխուրից: Մենք օրինակ պիտի առնենք այն ազգերից, որոնք մնալով լարելով զարգացած և աւելի են հասկանում այդ դոճը:

Նրանք միայն երկու միջոց են առաջարկում քաղաքը խօլէրային վարակումից ազատելու համար: Մէկ միջոցն է մարքի քաղաքը այնպէս, որ խօլէրային պարազիտները ճարակ չը գտնեն իրանց զարգանալու համար: Յայտնի է, որ եթէ մարքի իրանց մարմինը, տունը և կրեկները շատ մաքուր են պահում, նրանցում վնաս բազմանում զանազան միջատներ, ինչպէս օրինակ, ոչխուր, բաղնիք, որովհետեւ դրանք այնտեղ միայն

կարող են ապրել, որտեղ կեղտ կայ, որը մտնող է աչքի նրանց: Այսպէս էլ խօլէրային պարազիտները չեն կարողանում ապրել և բազմանալ ոչ մաքուր ջրում, ոչ մաքուր գետնում, ոչ էլ մաքուր սպիտակեղէնի վրա: Ով որ եւրօպական քաղաքներ տեսել է, նա գիտէ, որ Աստրախանի մաքրութիւնը այն քաղաքների մաքրութեանը հասցնել բնաւ անկարելի է: Աստրախանը մի փոքր շատ է բարեկարգ դրութեան վերածելու համար, երկար տարիների ջանքեր են հարկաւոր, մինչդեռ կայ մի ուրիշ, լիովին նպատակաւարտ մարդ իրագործելի միջոց: Այդ միջոցը կայանում է նրանում, որ պէտք է հետամուտ լինել վարակմանը և արմատախիլ անել նրան:

Խօլէրային պարազիտներն ինչպէս որ հեշտութեանը բազմանում են, նոյնպէս էլ հեշտութեամբ ոչնչանում են: Նրանց ոչնչացնելու և նրանց ներկայութիւնից ազատվելու համար պէտք է միայն այս կամ այն ոչ-թմանգալին միջոցները գործիչներ: Եթէ ամեն մարդ կարողանար խոլորացոյցի օգնութեամբ դիտել, թէ ինչպէս նրանք արագ ոչնչանում են զանազան միջոցներով, մի բազմ անգամ նա չէր վարանի բժիշկների պատուէրները խտրել կատարելու: Բայց, դժբաղդաբար, ա-

մենքը հնարաւորութիւն չունեն նրանց տեսնելու, և այդ պատճառով պէտք է հաւատ ընծայել գիտուն մարդկանց, բժիշկներին, աւելի զարգացած ազգերին, որոնք այդ միջոցները լայն չափերով են գործադրում իրանց մէջ:

Անդրկայսրը, Ֆրանսիացիք և գերմանացիք երկար տարիներ ուսումնասիրելով խօլէրային պարազիտները և նրանց ոչնչացնելու միջոցները, վերջապէս գտան, որ եւսացումը (եի տալը) բոլորովին ոչնչացնում է խօլէրային պարազիտներին: Եթէ խմելու ջուրը նախ քան գործածելը եւսացնելի, նրա մէջ գտնվող խօլէրային պարազիտները ոչնչանան և ջուրը խմելու համար անվնաս կը դառնայ: Ըստ երևոյթի, սա մի հեշտ և անվնաս միջոց է, բայց և այնպէս ազատ մարդիկ մշտապէս չեն կատարում նրան: Մենք չենք ասում, որ ամեն ջուր վարակած է, այլ թէ վարակումը պատահում է ջրի մէջ, իսկ ամեն դէպքում առանց հետազոտելու անկարելի է խմելու, այս պատճառով խոհանութիւնը պահանջում է ամողջ ժամանակը եւսացրած, յետոյ սառեցրած, ղէթ սառուցի վրա, ջուր խմել: Նոյնը կարելի է ասել և կերակրի մասին: Եթէ ամեն մի ուտելիք գործածվի եփած և խորոված, կարելի է ապա-

հով համարել իրան այդ ձանապարհով վարակվելուց:

Եթէ մի որ և է տան մէջ խօլէրայով հիւանդներ են եղել, հիւանդի տան բոլոր իրերը պիտի համարվեն մասամբ վարակված, մասամբ կասկածաւոր, նոյնպէս և արտաքինը, որտեղ ձգել են այդ հիւանդի արտաթորութիւնները, և սենեակը, ուր պառկած է եղել հիւանդը:

Հասարակ աչքի չերեղ խօլէրային պարազիտները կարող են մնալ հիւանդի մօտ գտնված ամեն իրերիցների վրա, այդ պատճառով առաջուց հարկաւոր է նրանց պիտասանել, այսինքն ոչնչացնել նրանց միջոց վարակումը: Գրա համար մի շատ հեշտ և պարզ միջոց կայ, այն է բոլոր կրակածիլ իրերիցները գործու աղբեցութեան ենթարկել:

Ինչպէս որ ջուրը եի տալով ոչնչանում են նրա միջոց խօլէրային պարազիտները, նոյնպէս էլ կարասիքի, անկողնի և սպիտակեղէնի վրայից ջրով շոգու միջոցով ոչնչանում են բոլոր պարազիտները:

Գրա համար ամեն քաղաքներում, որտեղ խօլէրա է պատահում, շինում են մեծ-մեծ սենեակներ, որտեղ վարակված բնակարաններից ընտրում



տարական դրուժեան մէջ են: Իրաքանչիւր գիւղում հասարակութեան կողմէն առողջապահ հոգաբարձուներ են ընտրուած, որոնք պէտք է վերահսկեն, ուշադրութիւն դարձնեն իրանց գիւղի մաքրութեան վրա, բայց դրանք միայն անուամբ են հոգաբարձուներ, որովհետեւ ոչինչ մի բան չեն կատարում, այլ մասնակցած են անտարբերութեան և անհոգութեան: Գիւղական տանտէրերը նոյնպէս հարեանցի կերպով են նայում գործին: Մնում է գործը արմինխտարացիների վրա. վերջինն էլ ժամանակ չէ դնում չընել իւրաքանչիւր մի գիւղի և անձամբ վերահսկել անխտարական մասերի վրա. դրում է քրիստոսի նման, որովհետեւ անկասկածաբար գիւղացիները են ոչինչ չեն օգտուած. իսկ երբ գալիս են մի քանի կասառուներ և կօզակներ և իւրաքանչիւրին երկու երեք մտրակի սաստիկ հարուածներ են հասցնում, միայն այն ժամանակ են սկսում մաքրել, և ամեն մի տանտէր միայն այդ ժամանակն է ուշք դարձնում իր գիւղի մաքրութեան վրա: Եւ այսպիսի ճիւղածոնքով, արարաբարդարար մնում է գիւղացիներին հետ, մտրակի հարուածներով և դաժանակներով գործ կատարել...

Անցեալները հողորդել էին, որ Շինակաղ գիւղում արդէն երեսացել է ասիական խոլերա. այժմ, ինչպէս լսում ենք երեսացել է և Արխանուս, խրեւոյնսկում, Գորիսում և Քարաձօնքում: Եւ ո՞վ գիտէ մի քանի օրէն յետոյ խոլերան ասելի կը սաստիկանայ, կը բարձրվի և մտաք կը գործէ ամեն մի գիւղէ: Եւ այդքան գիւղերը համար հարկաւոր են բացառելով բոլորչիներ և ֆելլաչիները. բայց սրտի ցածր պէտք է ասած, որ մեզանում տիրում է բոլորչիների և ֆելլաչիների մեծ պահպանութիւն: Գորիսում կան երկու բոլորչի և չորս ֆելլաչիներ, վերջիններէն միայն մէկն է մնում բոլորչի հետ Գորիսում:

Գանձելով պաշտօնապէս Շինակաղ գիւղում, աւելորդ չենք համարում մի ակնարկ գցել բոլորչիների և ֆելլաչիների դրոշմեան վրա, որոնք ուղարկուած են այդ գիւղերը խոլերայի առաջն առնելու նպատակով:

Բոլորչի կամ ֆելլաչիքը գալով խոլերայի երեսացած գիւղը, կարողւմ, բացառութեամբ է բոլորչական նախադրեւումը միջոցները, սակայն ժողովուրդը մի փոքր կամ անքանակ լսելուց յետոյ, անտարբերութեան է սալիս նրանց ասածները: Ստիպում էք, սպառնակչներ եք կարողում և վերջապէս խնդրում էք, որ գիւղերը մաքրեն, բայց կրկին անտարբերութիւն: Հասկացնում էք, որ խոլերայով հիւանդի փոխանակը և կրկնակցը չստան զուտը բայց օգի մէջ, որովհետեւ նպատակն են այգիլուով խոլերայի միկրոօրգանիզմը դանախում և տարածելու, կրկին չեն լսում: Մեռնում է խոլերայով հիւանդը, չորովը պէտք է այրել, մնացած իրերը պէտք է ժանտահարած աղբի, զեղինֆելլաչիայի նիւթարկել տան մէջ դանակով բոլոր իրերըները, գերեզանդը խոր քանդել և թող չը սալ, որ մտածին մէկը մտնուայ, թող չը տալ յարաբերութիւն ունենան ուրիշ գիւղացիների հետ, այդ բոլորը դուք կամենում էք կատարել, սակայն սաստիկ արգելքները եք հանդիպում:

Գիւղացիք առհասարակ շատ նեղ հայեացք ունեն բոլորչիների և ֆելլաչիների վրա: Մասնաւոր բազումք եկող մեր հերոսները այնպիսի շինճու լուրեր են տարածել մեր գիւղական անտիկ մէջ, որ միտաբանային անհասարկ է համարել նրանց, որ դեղորայքը միտաբանային չեն և այդ: Գիւղացիք մինչև անգամ դուռը դուռը անարդէ գիւղի մէջ, թէ մեզ բոլորչի չէ հարկաւոր, մերը դալլաքն է: Խոլերայով մէկը հիւանդանում է, մնում էք տները տեսնելու, ձեռք դրեալ դուռը են, թող չեն սալիս և միտաբանային հիւանդների հետընդ են ծածկում: Գիւղացիները աները գետնավոր, նեղովը, մուկ, խոնսա, ծխոտ են, և այդ աստիճանային մէջ պատկած է խոլերայով հիւանդը, ծածկված կեղտոտ վերակով. հիւանդի մի կողմում երեխաներն են պատկած, թէ առողջ և թէ հիւանդ, չորս կողմից չըջապատած գիւղական պատու կանանցով, ոչ կանոնաւոր հագուստ, ոչ անդարար ուտելիք:

Որպէս զի խոլերայ հիւանդութիւնը փոքր ինչ ընդհատվի և ուրիշ գիւղեր չը տարածվի, հարկաւոր է, որ գիւղերում առանձին ապաստարաններ հիմնվեն, որպէս զի հիւանդները հաւաքվին այդտեղ և այդպիսով հեշտ լինի համ բոլորչի նրանց, համ հիւանդի արտաթորութիւնները և չորերը հեշտ կերպով դեղինֆելլաչիայի նիւթարկել:

Եթէ մեծ թվով բոլորչիներ և ֆելլաչիներ չը

լինեն, եթէ գիւղերի անապրութիւնը չը վերացվի, խնայած եղբ, որ խոլերան բորբոքվելով իր աւելիչ ոյժով արչաւանդներ կը գործէ դէպի գաւառի բոլոր գիւղերը:

Յերգչէր

ՆԱՄԱԿ ԿԱՐՈՒՅ

Յուլիսի 24-ին

Խոլերան արդէն մտաք է գործել մեր նահանգը, նա հետո չէ կարն քաղաքը: Ինչպէս ասալքն առնել նրա տարածմանը: Միակ երբ այս դէպքում կարող էր լինել ժողովրդի գիտակցութեան զարգացումը. ժողովրդին հարկաւոր է հասկացնել իր օգուտն ու վնասը, իր չարն ու բարին, բայց ո՞վ պէտք է հասկացնէ: Թուրք հոգաբարձուները քարողում է, որ խոլերան Ատուծու բարկութեան արտայայտութիւնն է, որ մարդս իր ձեռնաստղից խուսափել չէ կարող և մարդկանց ամբողջ գործունէութիւնը անկող հիւրը դէմ համարում է մի տեսակ ըմբռստութիւն Արարչի դէմ... Հայ հոգաբարձուներ, Աւետարանի վէճ սկզբբունդները աշակերտը, նոյնպէս քարողում է պատուհան մասին, կարծես թէ միմիայն սարսափը, գինեի անշիջանակի ուտը, անբուս որդը կարող են բարոյականութեան ճանապարհից չեղղղողները ուղղել շահի վրա դնել: Մեր հոգաբարձուները դարձրել ընթացքում շատ բացատրեցին անարար գործողութիւնները, «միտք» անտեսով, բայց ոչ որ չը լսուող թէ այս ինչ վարձուքը վնաս է առողջութեան, ամօթ է, անտարբերութեամբ է: Չարտաբանները տանք բացատրում են իր թէ երեսասարդները մարմին մաքրութիւն քարողելով, ուրանում են հոգու մաքրութիւնը, ուրանում են արթնելու կարեւորութիւնը, մեղադրում են, որ նրանք սակաւ են յաճախում երեզներ: Մենք երբեք չենք հեքքում հոգու մաքրութիւնը, միայն կարծում ենք, որ մարդս ոչ թէ միայն արևանքի ժամանակ, այլ և միշտ պէտք է մարդկային արդի, պէտք է միշտ ինդիք Արարչի օգնականութիւնը, բայց մի և նոյն ժամանակ պէտք է Ատուծու շնորհած բանականութիւնով նախադրեւումները ձեռք առնել վերահսակ վտանգից արտազուտ: Եկեղեցին յաճախելու վերաբերութեամբ այսքանը կասեցը, որ շատ կամ սակաւ եկեղեցի դառը չեն կարող մէկը կամ միւսը աստուածապաշտութեան շախի որոշել, ինչպէս որ ի ցոյցս մարդկանց եկեղեցու գունդն ու քարերը լրիւր մենք ջերմեան գոտիներ չենք համարում: Մեր կարծիքով էջ միտքն մեծ սխալ գործնց այսպիսի ընդհանուր արևտի ժամանակ մի օրինաւոր չըջապարդ քարողել չուղարկելով ժողովրդին քաղաքակրթութեան, համարախոյնութեան և փոխադարձ օգնութիւն քարողելու: Կարծում ենք, որ եթէ մեր միակ ընդունակ քարողիքը հ. Խորեն Ստեփանէ, ուղարկվէր քարողելու, նրա մի երկու քարողը հրաքանի կը գործէին, ամենուրեք կոտնուայինք հիւանդանոցներ, կոտնուայինք ամենայն միջոց դիմարդելու խոլերային, ստուցեղեն սրտերը կը փակվանային, հարուստի քսակը կը բացվէր: Եւ արդարեւ շատ անհարմարին է մեր վիճակը. քաղաքում միայն երեք բոլորչի ունենք, որոնք կարող են անմիջական օգնութիւն հասցնել, դրանցից են մէկը նահանգական բոլորչի է, որը հալու թէ միջոց ունենայ քաղաքի հիւանդանոցներին օգնել. մնում են երկու բոլորչիներ: Գրանցից են մէկը դիմաբարական բոլորչի է: Ուրիշ տեղերից բոլորչի հրահրելու համար փող չունենք, զեղինֆելլաչիայի միջոցները դժուարութեամբ են ձարկում և դարձապէս զգացում է փողի պակասութիւնը: Կան շատ լաւ նախադիմներ, բայց դրանց իրադրուելու համար փող չը կայ:

Ամիս 22-ին, Թագուհի Կայսրուհու անուանակոչութեան օրը, քաղաքացիները ունենց նուիրատուութեան բացից այստեղ ձրի թէյարան չքարտերի համար: Մենք կարծում ենք, որ անհարմար է և ապագան և ստուցեղած ջուր դնել քաղաքի դանաղան մասերում, որպէս զի մշակ գասակարգը և նոյն իսկ քաղաքի ժողովուրդը միշտ ձեռքի սակ ունենային ջուրը: Մասնաւոր դա անհրաժեշտ է նրա համար, որ գետի ջուրը էպիդեմիայի երևալու դէպքում անպայման վնասակար կը լինի, իսկ թէք անկարող է մարդու ծախար միշտ յաղեցնել: Մի-երկու օրէն յետոյ բացվում է պատեղ ձրի սեղանատուն կովի. Հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի միջոցով յայտնում ենք, որ եթէ խոլերան միջոցներով: Այդ նպատակի համար մտադրու-

թիւն կայ գործ դնել 900 բուրբի: Արդահասանից օդակրու են 400 հողի, որոնք 200 հողի մի օրը, իսկ 200 միւս օրը (օրասէջ): Որովհետեւ օդակրուները լինելու են մեծ մասամբ՝ անբոյսներում աշխատող մշակները, ուստի մտադրութիւն կայ երեկոյան առ նրանց մի մի բաժին մեղէն կերակուր՝ առանց հացի: Յանկայի է որ քաղաքին հայ ժողովուրդը ամենայն կերպ աջակցել այս գեղեցիկ գործին:

Նահանգիս դանաղան գիւղերում խոլերան կոտորած է ստուծ: Երա տանակութեանը գաղափար տալու համար այսքան կասեցը, որ յուլիսի 22-ին միայն Բաշ-Շորազուր գիւղում մեռել են 15 մարդ: Գիւղերը առանձնացրած են: Ալեքսանդրապոլից եկողները տեսել են ճանապարհի վրա ընկած դիակներ:

Տիրիս երեսասարդները ցանկանալով ըստ չափու կարողութեան նպատակ քաղաքին առողջապահական դրոշմները բարձրելու գործին կամեցան առողջապահական խմբի կազմել, մեռել աները, հակել մաքրութեան վրա, բացատրել, համոզել նրա օգուտները, սովորեցնել ևխտահանման ձեռքը (նախապէս սովորելով բոլորչիները), հաւաքել տեղերներ չքարտերներն արտահանման նիւթի մասնակարգելու: Այդ խմբի մէջ մտադրութիւն կայ հրահրել ամեն աղբութիւններին պատկանող ինտելլիգենտ մարդկանց: Բայց քաղաքին ու ոտորկանապետը յայտնեց այդ մասին իրանց դիմադրելին, որ հարկաւոր է քաղաքի բնակիչները ժողով կազմել, 500 ստորադրութեամբ հասարակական վճիռ կայացնել այդ երեսասարդները ընտրութեան մասին, որպէս զի վերջինիս նպատակով թող տրվի ժողովանալ մասնակցութիւն ժողովուրդի իսկ առողջապահական խմբի մենք արդէն ստեղծ, ասել էր պ. ոտորկանապետը: Մտադրութիւնը մնաց անխտար:

Մեր քաղաքում բացվել է արդէն ձրի թէյարան. օրերուստ բացվում է և ձրի ճաշարան: Բայց դարձեալ շատ և շատ կարիքներ կան լրացնելու: Հարկաւոր մշակներ գիւղերում են արտաները և մեծ անկիւնները մէջ, խոնս և կեղտոտ յատակի վրա, աներակալելի կերպով կեղտոտ ցնցարները մէջ: Խոլերա երևալու դէպքում հիւանդները ամեն իրերըները մի մասը պէտք է այրել և որպէս զի չը թողցնեն հարկաւոր է վճարել այրած իրերըները արժեքը, բայց ինչ միջոցները... Մեր 50 և 100 հազարները տեք հարուստները կարծում են թէ արդէն իրանց պարտքը կատարել պրծել են որ է 30—40 բուրբի նուիրելով ձրի թէյարանին: Մենք պարտաւոր ենք շնորհակալ լինել դրա համար եւ Բայց այսպիսի արեւները ժամանակ դրանք մի կաթիլ ջուր են թշուառութեան ծովի մէջ. մեծ կարիքը պահանջում է և մեծ գոհողութիւն:

ՆԱՄԱԿ ՄԵՂՐԻՅ

Յուլիսի 10-ին

Երկրայ նամակով ստիպված եմ գանդառուել մեր շինական պաշտօնակատարներին: Լուրեր են պըտրում մեզ մտ, թէ Բազուկի, խոլերայի այդ երկրորդ միջոց, փախաղ Չանգելուր դաւառել գիւղացիներին մի քանիներն իրանց ծննդավայրում մեռել են, թէ արդէն այդ գիւղերում եղողները մէջ խոլերայով մեռնողները դէպք է պատահել: Իսկ այդ գիւղերը մեր անխտարական հակողութեան յանձնարած շրջանին կարծ են համարում: Արեւելք խմբում, Բեշ անն, անխտարական մասի վերահսակողը երբ իր շուրջը անմաքրութեան ամբարներ են: Ժողովուրդը մաքրասիրութիւնից այնքան հեռու է, որքան որ հետո է արեւելք արեւմուտքից:

Ամիս 2-ին, մի յայտարարութեամբ, գրված անցեալ յունիսի 30-ին, դիմացինը մեր տեղական պ. պրիւստովին, մանրամասնօրէն նկարագրելով մեր հակողութեան յանձնարած 24 գիւղերի անխտարական ողորմելի դրոշմները, պօլիլայի անջակցութիւնը խնդրելով:

Կազմակերպութեամբ կարողացած առողջապահական համար գործադրած միջոցները մեր կողմում միանգամայն անխտարածել են, որովհետեւ ժողովուրդը վերին աստիճանի ազգատութեան մէջ է: Գտնել մաքրութիւն պահպանելն, բայց այդ էլ չը կայ:

Երկու խօսք են մեր կողմից: Տօպօլութեան միջոցով յայտնում ենք, որ եթէ խոլերան մեր կողմերը գալու լինի, մենք մեզ ա-

զատված ենք դուռ՝ այն ծանր պատժականաւորութեանց, որը պաշտօն ստանձնած օրը իրաւունքները հետ միասին անուցանը: Ահա բոլորը Մանխտարական մասի վերահսակող Մատթէոս Շահեանց:

ՆԱՄԱԿ ԽՄԵՂՐԱՅԻՆ

Յուլիսի 31 յունիսի

Այսօր պաշտօնապէս բացվեց առաջին ձրի թէյարանը, ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու դաւթում, անջակցութեամբ ժողովրդի:

Թէ որքան օգտաւէտ է ձրի թէյարանը ունենալ յերանի պէս տեղում, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ Եպիֆանիան ահալին դուրը է ստանում, ինքն ըստ ինքեան հասկանալի է: Բաւական է, որ դրանով կարելի լինի փոխոցներով վազող բայց առուները չրի գործածութեան առաջն առնել, այն չրերի, որոնք այժմ վարակված են և միմիայն վարակման պատճառ են դառնում: Այս հանգամանքը ուրախալ կերպով է, որ ժողովուրդը վերջապէս հասկացած լինելով գիտութեան պահանջները և ինքնօգնութեան կարիքը, չէ դաժնում նուիրել իր կրօնիկները թշուառներին, իր աղքատ դրացիներին, վերջապէս իր կիսնքի փրկութեան համար: Ժողովուրդը համարակցում վերաբերվեց դէպի այս ձեռնարկութիւնը և դէպի գործին դուրս անուցած երեսասարդները: Եպատան առ այժմ հասում է 400 բուրբու, այդ պատճառով էլ մի կերպ թէյարանի բացումը տեղի կունենայ յարաբար: Ետևում կը բացվի և երկրորդ թէյարանը, որի տեղն արդէն որոշված է, այն է Ս. Յովհաննէս եկեղեցու դաւթիլը, կօնք քաղաքամասում:

Այսօր թէյարանն այցելեցին ընդամենը 170 հոգի (չառիներն դու և անյայտ է), որոնց թվում գիւղացիք, քաղաքացիք, բանօրներ, երեխաներ, մինչև անգամ և կանայք: Իսկ երեկոյան մի քանի աղքատ և այլի կանայք ստացան տաք ջուր, թէյ և շաքար: Մտաքանք ասել, որ թէյի հետ տրվում էր և մի կտոր հաց: Իւրաքանչիւրին մի առ մի բացատրում էր հոգի ջրի գործածութեան վտանգները և թէյի կարեւորութիւնը, որից կարող են օգտվել բոլորը ամեն անգամ: Թէյարանը կունենայ եւսացրած և ապաւեցրած պատրաստի ջուր, ցանկացողները համար:

Որպէս զի թէյարանները հասած լինեն իրանց բուն նպատակին, թող անհարմար, մանաւանդ անարանոցներում անպող արեւանցիք յիշել թէյարանութեան մասնակց իրանց շաքար քաղաքացիներին և առան արեւներ տան, իսկ շաքարները առանց քաղաքի և անաւելու այցելեն թէյարանները և օգտվեն նրանցից:

Շնորհակալութեան արժանի են պ. պ. Յով. Մեղիբանց, Գեղեճ Սահրոնեանց և Յով. Նաղարեթեանց, որոնք շին ինչպիսի մի միջոց գործը տուած ամենուր համար:

ՆԱՄԱԿ ՆԵՐՍԻՍԻԱՆ

Յուլիսի 10-ին

Ներկայ նամակով ստիպված եմ գանդառուել մեր շինական պաշտօնակատարներին: Լուրեր են պըտրում մեզ մտ, թէ Բազուկի, խոլերայի այդ երկրորդ միջոց, փախաղ Չանգելուր դաւառել գիւղացիներին մի քանիներն իրանց ծննդավայրում մեռել են, թէ արդէն այդ գիւղերում եղողները մէջ խոլերայով մեռնողները դէպք է պատահել: Իսկ այդ գիւղերը մեր անխտարական հակողութեան յանձնարած շրջանին կարծ են համարում: Արեւելք խմբում, Բեշ անն, անխտարական մասի վերահսակողը երբ իր շուրջը անմաքրութեան ամբարներ են: Ժողովուրդը մաքրասիրութիւնից այնքան հեռու է, որքան որ հետո է արեւելք արեւմուտքից:

Ամիս 2-ին, մի յայտարարութեամբ, գրված անցեալ յունիսի 30-ին, դիմացինը մեր տեղական պ. պրիւստովին, մանրամասնօրէն նկարագրելով մեր հակողութեան յանձնարած 24 գիւղերի անխտարական ողորմելի դրոշմները, պօլիլայի անջակցութիւնը խնդրելով:

Կազմակերպութեամբ կարողացած առողջապահական համար գործադրած միջոցները մեր կողմում միանգամայն անխտարածել են, որովհետեւ ժողովուրդը վերին աստիճանի ազգատութեան մէջ է: Գտնել մաքրութիւն պահպանելն, բայց այդ էլ չը կայ:

Երկու խօսք են մեր կողմից: Տօպօլութեան միջոցով յայտնում ենք, որ եթէ խոլերան մեր կողմերը գալու լինի, մենք մեզ ա-

Մեզ գրում են ՇՈՒՍՎԷՐ գիւղից, որ այդտեղ էլ երեսացել է խոլերան: Մի կտոր երեսասարդներ

գործում են. նրանք հիմնել են աղքատ ժողովրդի համար ձրի թէյատոն, որին առաջին օրը այցելելին 160 հոգի: Գործող երկամասրդներ, որոնք թէյատոն բացման գործի գլուխն անցած անձնուրաբար են աշխատում, սրանք են. Ն. Չոբանյան, Վ. Մէլքոնյան, Գ. Զարգարյան, Պ. Շէլյուսյան, Ս. Մէլքոնյան, Վ. Ռէստանյան, և Վ. Տէր-Սիմոնյան: Եւ միթէ հարուստ շուրջը-ցիք իրանց նուէրներով չեն օգնի այդ օգտակար գործին:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են յուլիսի 31-ից հետեւեալը. «Խօջեանն ահա ուժ օր է որ կոտորածներ է անում այստեղ: Քաղաքում (այլ ևս չենք խօսում նահանգի մասին) օրական մինչև 20 մարդ են մեռնում: Պաշտօնապէս յայտնի է որ մեռնողների մեծ մասը թուրքեր են: Սակայն թուրքերն էլ շատ անգամ ծածուկ են թաղում իրանց մեռելներին, Շարխիթի օրէնքին համեմատ:»

ԿԱՂԶՎԱՆԻՑ մեզ գրում են. «Խօջեանն արդէն մտել է Շիրակ, իսկ Շիրակից այստեղ մի հարիւր վերստ հազիւ լինի: Ոստիկանութեան կողմից կարգադրութիւններ եղել են: Կարգադրվել է արգելել ամեն տեսակ մրդերի արտահանութիւնը: Տեղական ազգաբնակչութիւնն ամբողջապէս կառավարվում է Վարս, հարաւային Շիրակ, Բասէն, Գեօրա և Արաշկերտ միջոց տանելով և վաճառելով: Թաց միջոց վաճառուան արգելելով, կարգվանցիները նեղ դրութեան մէջ են ընկնում: Ցածկաց սահմանի վրա եօթնօրեայ կարանտին է նշանակված, այնպէս որ ոչ մի տեսակ միջոց չէ կարելի անցկացնել այն կողմ: Տեղական դեղատունը բոլորովին բանի պէտք չէ. ամենամանրամասն դեղեր անգամ չը կան: Ամբողջ կաղզվանում, երեակայեցէք, որ միայն սաբիթի լաստութեամբ գանկից սրբահիշ (пудверизаторы): Լաւ է, որ «Բարեգործական ընկերութիւնը» որոշել էր 200 ռուբլի կամ փոքր կամ ավտանան միջոցներով նուիրել կաղզվանին, եթէ ոչ բաւական նեղ դրութեան մէջ ընկած կը լինէինը:»

Այսօր, շաբաթ օր, օգոստոսի 8-ին տեղի կունենայ Հաւաքարի ձրի ճաշարանի բացումը: Տեղական մի քանի լրագրիներ սխալվել էին, հարգելով որ ճաշարանը բացվել է ամիս 6-ին:

Ստացանք նորերս թիֆլիսում սպաղրած մի թարգմանական գիրք, «Կեանքի Գպրոցը» վերնագրով: Վէպը պատկանում է Գրիգորի գրչին, որ ուսուցիչն ինքուով համառօտել է Բօրիսով, և այդ համառօտութիւնից թարգմանել է հայերէն Գրիս քահանայ Աղանան: Գրքի գինն է 1 ռուբլի:

Թիֆլիսում արդէն բացված են մօտ քսան թէյատոններ, և ինչպէս երևում է արամադրութիւնից, ցանկացողներ կան էլը նորերը բանալու: Խորհուրդ ենք տալիս բաւականանալ եղած թէյատոններով, որոնք կարող են համարձակ բաց թողնել օրական 50,000 բաժակ թէյ, և փողերը ծախանել ձրի ճաշարաններին վրա: Թիֆլիսում այժմ բացված են միայն երեւո ձրի ճաշարան, բայց էլը մի երեք-չորսի կարօտութիւն կայ, եթէ աւելի չասենք:

Մեզ հաղորդում են, որ Տրապիզոնի գաւառում խօջեան սկսում է սարսափել: Թիւրքաց կառավարութիւնը կարանն առնելով յայտ ունի խօջեանի առաջն անունը:

Միամիտների միջոց պղտորողները նմանաբար բար լուր էին սարածել, թէ իրանց թիւրքերով, թէ իրանց արբանակների ձեռքով, որ իբր թէ ս. սինոզը արգելել է Սանասարեան Մամբրէ կաթնաբուսի մարմինը վանքի բակում թաղելու: Եւ սակայն այդ մարմինը վանքի բակում թաղվեց սինոզի հրամանով: Աւելի հաւանական է այն միտ լուրը, որ պարտում էր վանքի բակին, իբր թէ հանդուցեալի ցանկութիւնն է եղել Կօջորում թաղվել, և թէ այդպէս էլ հեռագրված է եղել կօնստանուպոլիսից սինոզին, որը և կարգադրել է համաձայն այդ ցանկութեան: Իսկ յետոյ, երբ մի ուրիշ արգելաւիժ հանգամանք խախտել է Կօջորում թաղվելը և Թիֆլիսից էլ մի և նոյն ժամանակ հեռագիր է գնացել խնդրելով որ թաղումը վանքի բակում լինի, սինոզը այս դեպքում էլ չարժեքի է համաձայն պատշաճի, կարգադրելով թաղումը վանքի բակում:

Քում էլ չարժեքի է համաձայն պատշաճի, կարգադրելով թաղումը վանքի բակում:

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդի կարգադրութեամբ ուղարկվել են արդէն յուլիսի վերջին դեղային միջոցներ և դրամ հետեւեալ տեղերը, ընկերութեան տեղական վարչութիւններին. Շուշի 400 ռ. դրամ, Ախալցխա 200 ռուբլու դեղ, Գօրի 50 ռուբլու դեղ և 150 ռուբլի դրամ, Հին-Նախիջևան 400 ռուբլի դրամ, Նոր-Բայազետ 200 ռուբլու դեղ, Կաղզվան 100 ռուբլու դեղ, 100 ռուբլի դրամ, Կարս 200 ռուբլի դրամ, Վաղարշապատ 200 ռուբլի դրամ, Կերբէնը 200 ռուբլի դրամ, Ախալքալաք 100 ռուբլու դեղ և 100 ռուբլի դրամ, Թելաւ 200 ռուբլի դրամ, Ալեքսանդրոպոլ 200 ռուբլու դեղ, Նուխի 200 ռուբլի դրամ:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՌԵՐ**

— Լօնդոնում Պէլլինից ստացված տեղեկութիւններին համեմատ, Չինաստանը դեղատարութիւն ունի զեպի պէտք զինուորել ուստաց զօրքերի յայտնվելուն Պամիրում:

— Բէլգրադից «Temps» լրագրին հեռագրում են յուլիսի 28-ից (օգոստոսի 9-ին) հետեւեալը. «Հին Սերբիայի շատ տեղերից կրկին հաղորդում են այն տեղերում ծագած անկարգութիւնների մասին: Ալբանացի մահափախները սպանում և կողպում են քրիստոնէականներին: Արաբական պետութիւնների հրատարակներին մի քանի դանդաղներ են սրված: Սերբիական կառավարութիւնը դիտարարութիւն ունի դիմել Թիւրքիային հարցապնդումով:»

— Կ. Պօլսի լրագրիները հաղորդում են, որ ոստիկանութեան մինիստրի կարգադրութեամբ, սովորական մարզադպրոցում ապրող եկւոր հրէաները, առաւելապէս Ռուսաստանից, կուղարկվեն Չիլոնիայի, Սալոնիկի, Եանինի և Կոստանպուլի վիճակները: Մինիստրը այդ կարգադրութիւնն արել է Կ. Պօլսի աննիտարական դրութիւնը բարելոցելու համար:

— Համարեա բոլոր եւրօպական պետութիւններն ընդունեցին խոստովան կառավարութեան հրաւերը՝ ուղարկել Ձեռովա դիտարկման նաւեր կօրովի յիշատակը յարկելու և ի պատիւ խոստովան թողաւորական դոյզի, որը կը գնայ այնտեղ սեպտեմբերին:

— Բելգիական կառավարութիւնը մի յայտարար ուղարկեց Ֆրանսիական մինիստրութեանը՝ պահանջելով գառի ենթարկել Ֆրանսիական շատ լրագրիներ՝ Բելգիայի թագաւորին վերաւորելու համար:

— Անգլիական ազատամիտները ողջունում են մարիլի Սոլբրիի մինիստրութեան անկումը: Հաւատացում են, որ Գլիկ և Լաբուշէր պիտու են, որ նոր մինիստրութիւնը հրաժարվի հին մինիստրութեան արտաքին քաղաքականութիւնից:

**ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ**

**ՀԻՒՍԻՍԱԳԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ**

ՊԵՏԵՐՈՒՊՈՂ, 5 օգոստոսի: Երէկ քննութեամբ օֆիցիէրի աստիճան ստացան 1,168 մարդ, 87 մարդով աւելի քան անցեալ տարին: Օգոստոսի 3-ին և 4-ին Պետերբուրգում հիւանդացան 70, առողջացան 5, մեռան 5:

ԼՕՆՊՕՆ, 5 օգոստոսի: Նոր մինիստրութիւնը կազմված է.— Գլխաւորն՝ գանձարանի առաջին լօրէ, լօրէ Հէրշել լօրէ կանցլէր, լօրէ Կիմբրէժ՝ ստատս-սեկրետար Հիւդախանի, լօրէ Բօսլերի՝ արտաքին գործերի մինիստր, լօրէ Ռիպօն՝ գաղթականութեան, Ասիուիոզ՝ ներքին գործերի, Բաննիքան՝ դիտարկման, Սպէսալէր՝ ծովային տոճեան առաջին լօրէ, Հարկօրն՝ գանձարանի կանցլէր, Ջօն-Մօրէժ՝ աւագ քաղաքաւար Կրանիգայի, լօրէ Խակտօն՝ փոխ-արքայ Կրանիգայի:

ՊԵՏԵՐՈՒՊՈՂ, 6 օգոստոսի: Թագաժառանգ Յեւսարիկը ստացաւ փողապետի աստիճան.— «Karlissan» լրագրի հրատարակութիւնը դադարեցված է 8 ամսով:— «Սեր. Յիլ.» լրագրի հատով ծախելը և նրա մէջ մասնաւոր յայտարարութիւնների սպաղրելը նորից թողարկված է:— Բժշկական դեպարտամենտը ուղարկել է զանազան նահանգներ մինչև 3,456 պարզ կարգիտան թիւուստ:— Պետերբուրգում օգոստոսի 4-ին և 5-ին հիւանդացան 60, առողջացան 19, մեռան 22:— Չինուորական դպրոցների այն աշակերտները, որոնք ամառվայ արձակուրդներ են ստացել, պէտք է վերադառնան դպրոցները սեպտեմբերի 8-ից, ընդունելութեան քննութիւնները տեղի կունենան սեպտեմբերի 1-ից:

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՐ ԱՐՏՈՒՆԻՑ

**Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր**

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՏԻՍՏՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱԳԻ  
Թիֆլիսի քաղաքապետը տեղեկացրեց ինձ, որ նա ստացել է հեռագիր այն օգոստոսի 4-ից Նիժնեօրոնեան նահանգապետ Բարանովից և տօնավաճառային մասնաժողովի նախագահ Մորոզովից, որ Նիժնի-Նօվոօրոնում էպիդեմիան վերջանում է և ԱՌԵՏԻՍՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՆԻՃԵԳՕՐՕԳԵԱՆ ՏՕՆԱՎԱՃԱՌԿԱՐԱՀԱՄԱՐ ոչինչ արգելքներ և կարանտիններ չը կան:  
Այդ բանի մասին Թիֆլիսի առևտրականները աւագը հասցնում է ի դիտութիւն Թիֆլիսի 1-ին և 2-րդ գիւղիայի վաճառականներին:  
1—1

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ, ԱՌԱՐՏԵԼՈՎ ՏԵՆՕԼՕԳԻԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ, ցանկանում է ունենալ հայոց թիմական դպրոցներից որ և է մէկում, կամ ձեմարանում դասեր, զիլաւորակէ մանկանախկայից: Ցանկալի է, որ դասերի թիւը շաբաթական 18-ից աւելի չը լինի: Պայմանների մասին դիմել այս հասցեով, Шуша, Аракелу Бабахянянцу.  
№ 88  
2—5

**ՁՈՒԻ ՍԱՊՈՆ**  
ЯИЧНОЕ КУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО. ВЬСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.  
  
**Ա.ՄԻՈՒՆԵԻՔԵԿ**  
2—52 (2) № 86

Խնդրում եմ Անդրկասպեան երկրում ապրող այն հայերին, որոնց յայտնի է իմ եղբոր՝ Կարապետ Անտօնեան Տէր-Աբրահամեանցի տեղը, բարեհաճեն յայտնել «Մշակի» խմբագրութեանը: Նա գտնվում էր Մերզի, Չարջու և Կերկի: Արհեստով պօրան օյ էր:  
№ 82  
Միտիչ Տէր-Աբրահամեանց  
4—5

**ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍԱԿԵԱՆԻ ՊԱՇԵՍ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ** գեղերի, մորթի գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և անտեսական գործիքների, բացված է Կովկասում, վօրօնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ:  
(№ 67)  
12—100 (և շ.)

Յճեղ ունեցող ՌՈՒՍԱՑ ԼԵՁՈՒ ՌԻՍՈՒՑԻՉ կամենում է պաշտօն ունենալ հայոց ծխական ուսումնարաններում:  
Պայմաններով դիմել ԿИЗЛЯРЪ, Гаврилы Сименяицу (передать учителю).  
№ 87  
3—4

**ՄԻ ՌԻՍՈՒՑԻՉ**, որը պատկանում է Գ. Դասակարգին, ունի ցէնդ (звание, городск. приходск. учителя) և ընդ սմին Հայկական Հայնարութեան վիպական, պաշտօն է որոնում գաւառական քաղաքներում:  
Հասցէ՝ Чрезъ БАКУ, въ гор. РЕНТЪ, (Персія) учителю Константину Мириманову.  
№ 87  
3—3

Հարկաւոր է մի ՀԱՅ ԴԱՍՏԻՍԱՐԱԿՉՈՒՀԻ երկու մանկահասակ որը երկանների համար Գանձակում ցանկացողները կարող են պայմանների մասին տեղեկանալ «Մշակի» խմբագրութեան մէջ:  
№ 87  
3—5

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒՆԻՍԻՑ Ս. ՇՄԱՌՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՌՐ Է ՄԻ ԲԱՀԱՆԱՅՍՅՈՒ, որը աւարտած լինէ ս. Ելիմաճի ձեմարանում կամ Ներսիսեան դպրոցում, զիտեսայ և ձայնագրութիւն: Բացի ծխականներից ստացած արդեւքից, կունենայ և երկուս դպրոցներում դասեր, կրօնից կամ ուրիշ աւարկաններից: Պայմանների համար դիմել Վերին-Ագուլիս, Հայրապետ Արատիանեանցին:  
№ 86  
4—5

НЪМЕЦКАЯ ГОСТИННИЦА  
HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, քաղաքի կենտրօնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորած սօնէրներ: որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նօմէրների գինը 50 կօպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-դադարան, որտեղ ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Գար» լրագրիները, հիւրերի համար անվարձ: կայ ընտօրան, սեկեթօն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ:  
Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:  
(№ 21)  
29—130 (2)

ՄԻՋՈՑ ԽԱՐԻՈՒԽԻ ԴԵՄ  
  
**«Ольфакторіумъ Нуделинъ» М. І. ЖИРМУНСКАГО.**  
Բժշկական դեպարտամենտից թոյլատրված  
**ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԳԻԼԻՆ**  
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ  
Ցախվում է 40 կօպէկով  
Կեղազով ծախան Ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում  
№ 12  
38—40